

ԱՎԵՏԻՍ ՓԱՓԱԶՅԱՆ

ԹԱՆՁԻՄԱԹԻ «ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԸ» ՕՍՄԱՆՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԵՐԻ ՄԵՋ

19-րդ դարում Օսմանյան կայսրությունը շարունակում էր մնալ որպես հետամնաց հողագործական երկիր, գյուղատնտեսական արտադրության ծայր աստիճան ցածր մակարդակով: Աշխատավոր գյուղացիության դրությունը չափազանց ծանր էր, հատկապես տարեցտարի աճող աշարի (տասսանորդի) և այլ բազմապիսի հարկերից: Երկրում մեծ չափերի էր հասել կաշառակերությունը, չարաշահումները, առավել ևս ազգային խտրականությունն ու ճնշումները: Բացարձակապես բացակայում էր կյանքի, ունեցվածքի և պատվի ապահովությունը:

Օսմանյան կայսրության ծանր լուծը թոթափելու համար, դեռևս դարասկզբին սկսվեց կեղեքված ժողովուրդների ազգային ազատագրական պայքարը: Հակառակ թուրքերի գործադրած դաժանություններին, այդ ապստամբությունները պսակվեցին հաջողությամբ, և աստիճանաբար ստեղծվեցին ազգային անկախ պետություններ:

Այդուհանդերձ, 19-րդ դարի կեսերին Օսմանյան կայսրության տիրապետության տակ մնացին ազգեր, որոնք ի վիճակի չէին ազատագրվելու և ինքնուրույն կերտելու իրենց ճակատագիրը: Ահա այդ ժողովուրդների վիճակի «բարելավումն ու ազատագրումը» մեծ պետությունները դարձրին օրակարգի հարց, ավելի ճիշտ՝ իրենց շահերից ելնելով, հետամուտ լինելու բաժանել կայսրությունն ու առաջինը ստանալ ամենամեծ բաժինը: Թուրքական կառավարությունը, ձգտելով մեծ պետությունների ուշադրությունը շեղել այդ կնճռուտ հարցերից, 1839թ. սկսեց կիրառել բարենորոգումների քաղաքականությունը, և բոլոր միջոցներով համոզել Եվրոպային և մասնավորապես Ռուսաստանին, որ այսուհետև վե-

րացվելու են մահմեդականների և ոչ մահմեդականների միջև եղած խտրականությունները, և ապահովվելու են Օսմանյան կայսրության հպատակների կյանքը, ունեցվածքը, պատիվը, կարգավորելու են հարկերի արդարացի բաշխումն ու զանձումը, զինվորական ծառայությունը, դատական գործը, ժառանգության հարցերը: Վերացվելու են կաշառակերությունն ու չարաշահումները և այլն և այլն: Իրականում, դրանց իրականացման համար չկար համապատասխան հիմք և ոչ էլ մտադրություն: Թուրքական կառավարությունը վարչական, հողային, քաղաքացիական բարենորոգումների ծրագիրը իրագործելու համար 1839թ. նոյեմբերի 3-ին Կ. Պոլսի սուլթանական պալատի Գյուլիսանե կոչված պարտեզում հրապարակեց կայսերական հրովարտակը՝ Հաթթը շերիֆը (Սրբազան գիր), որը հետագայում ընդհանուր անունով կոչվեց «Թանգիմաթ» (Թանգիմաթը. արաբ. «թանգիմ» բառի հոգնակի ձևն է, որ նշանակում է բարեփոխել, կարգադրել, խմբագրել):

Դժբախտաբար, բարենորոգման այս նախաձեռնությունը և նրա հետագա ընթացքը ցույց տվեց, որ այն խախտտ էր իր հիմքից, որովհետև նախ այն խորթ էր ավատատիրական երկրին և ընդհանրապես՝ մահմեդական մտայնությանը: Էական նշանակություն չունեցավ նաև 1856թ. հրապարակված հրովարտակը՝ «Հաթթը Հյումայուն» (Սուլթանական գիր) անունով, ուր կրկին անգամ խոստացվում էր ապահովել երկրի հպատակների անվտանգությունն ու երջանկությունը: Մի խոսքով այդ հրովարտակների հիման վրա պատրաստված օրենքներն ու կանոնադրությունները մնացին միայն թղթի վրա և չկիրառվեցին կյանքում:

Թանգիմաթի շրջանում հրապարակված օրենքները, կանոնադրությունները, հրամանագրերը, և ընդհանրապես սուլթանական կառավարության կողմից ազգային փոքրամասնություններին շնորհված պաշտոնական գրությունները, լույս են տեսել «Դյուստուր» (Օրենսգիրք) խորագիրը կրող մատենաշարում, արաբատառ թուրքերենով: Առաջին անգամ այն լույս տեսավ Հիժրի թվականով 1267-ին (1850-1851թթ.): Հրատարակության սկզբում զետեղված էր նաև սուլթան Աբդուլ Մեջիթի նշանավոր հրովարտակը՝ «Հաթթը Շերիֆը»: Օրենսգիրք երկրորդ հատորը լույս տեսավ 1279 (1863) թ.: Այս հրատարակության մեջ ընդգրկված էր վերոհիշյալ առաջին հատորի նյութերը և այն օրենքները, որոնք հրապարակվել էին մինչև 1863 թվականը: Այն հրատարակվեց

նաև 1282 (1865–66) թվականին: Հետագայում 1289 (1872–73) թ. սկսած, «Դյուստուրը» լույս տեսավ 4 հատորով և 4 հավելվածով¹ (4–րդ հատորը ունի երկու առանձին հրատարակություններ. առաջինը լույս է տեսել 1296 (1878–79) թ. սուլթանական տպարանում, երկրորդը՝ 1299 (1881–82)թ. Մահմուդ Բեյի տպարանում: Բովանդակությամբ դրանք համընկնում են և տարբերությունը միայն էջերի քանակի մեջ է: 1296 (1878–79)թ. մինչև 1302 (1885)թ. հրապարակված օրենքներն ու կանոնները լույս են տեսել 2 հատորով և մի հավելվածով²: 1885թ. մինչև 1908 թվականն ընկած ժամանակաշրջանում հրապարակված օրենքները կանոնավոր չեն հավաքվել և չեն հրապարակվել, բացառությամբ մի քանիսի, որոնք լույս են տեսել մամուլում: Պատճառը Արդուլ Համիդի վարած դաժան քաղաքականությունն էր:

1911թ. «Օրենքներ հրատարակող վարչությունը» հրատարակեց «Դյուստուրի»-ի երկրորդ մշակված խմբագրությունը³: Ի տարբերություն նախորդ հրատարակությունների, այս հատորների մեջ ընդգրկվեցին 1908–1915թթ. հրապարակված սուլթանական հրամանագրերը (Irade-i Senie), մեջլիսի արձանագրությունները, պերաթները՝ ուղղված Կ.Պոլսի թեմերին, զինվորական օրենքներն ու կանոնները, դիվանագիտական գրությունները՝ այդ թվում պայմանագրերը, համաձայնագրերը՝ ֆրանսերեն բնագրերի հետ:

Հարկ է նշել նաև, որ «Դյուստուրի» մեջ չեն ընդգրկված Թանգիմաթի շրջանում և հետագայում հրապարակված բոլոր օրենքներն ու կանոնադրությունները: «Դյուստուրի» հատորներից դուրս են մնացել բազմաթիվ բերաթներ ու թաքրիդներ, որոնք զանազան հարցերով ուղղված են եղել համայնքների առաջնորդներին, ինչպես օրինակ 1850թ. «Օսմանյան Բողոքական հպատակներին շնորհված ֆերմանը», 1852թ. հայ կաթոլիկ պատրիարքությունը հաստատող պերաթը, 1853թ. ոչ-մահմեդական առաջնորդներին ուղղված ֆերմանը, կամ 1870 մարտի 11-ի բուլղարական եկեղեցու ինքնուրույնությունը սահմանող հրովարտակը և այլն: Օսմանյան օրենքների, միջազգային պայմանագրերի, ինչես նաև զանազան փաստաթղթերի թարգմանության և հրատարակության ուղղությամբ զգալի աշխատանք կատարել են եվրոպական թուրքագետները⁴: Սակայն հրատարակված այդ աշխատությունները հիմնականում պարունակում են Թուրքիայի և այլ պետություննե-

րի միջև կնքված պայմանագրերի թարգմանությունները՝ քիչ ուշադրություն դարձնելով ազգային վտեքրամասնություններին վերաբերող կանոնադրությունների կամ հրամանագրերի հավաքման և հրապարակման գործին:

Ինչպես նշվեց, քրիստոնյաների վիճակը բարելավելու վերաբերյալ սուլթանական կառավարության կողմից ընդունված բազմաթիվ օրենքները չգործադրվեցին: Ընդհակառակը, օրըստօրե կայսրության ոչ-մահմեդական բնակչության դրությունը ավելի էր վատթարանում: Օսմանյան կայսրության կողմից ազգային փոքրամասնություններին շնորհված հրամանագրերից (առանձին սահմանափակումներով և խոչընդոտներով), մասամբ կիրառվեցին միայն կրոնական համայնքներին վերաբերվող կանոնադրությունները, ինչպես նաև քրիստոնեաբնակ առանձին մահաճգներին տրված ներքին ինքնավարության արտոնությունները, (օրինակ Կրետե կղզին, Լեռնալիբանանը, Սամոս կղզին, Աֆոնի լեռը և այլն): Ստորև ներկայացվում են այդ համայնքներին վերաբերվող կանոնադրությունները:

Հունական համայնքը Օսմանյան կայսրությունում ուներ 4 Պատրիարքություն: Դրանք էին Կ.Պոլսի, Երուսաղեմի, Անտիոքի և Ալեքսանդրիայի: Վերջին երեքը ինքնուրույն էին և ունեին հավասար իրավունքներ: Սակայն կրոնական գործերում վճռական իրավունքը պատկանում էր Կ.Պոլսի Պատրիարքությանը, որի իրավասության մեջ էին մտնում նաև բարձրաստիճան հոգևորականների նշանակումը, հեռացումը և պատժումը:

Կ.Պոլսի Պատրիարքության կանոնադրությունը, որը բաղկացած է 11 գլուխներից և 130 հոդվածներից, Բարձրագույն Դռան կողմից վավերացվեց 1862 թ. հետևյալ խորագրով՝ «Հունական Պատրիարքի ընտրության, նշանակման և Պատրիարքարանի բարեփոխությունների վերաբերյալ հունական Պատրիարքարանի խորհրդի կողմից կազմված ընդհանուր կանոնադրությունը»⁵:

Երուսաղեմի հունական Պատրիարքարանի կանոնադրությունը տրված է առանձին: Այն բաղկացած է 4 գլուխներից և 17 հոդվածներից: Պետք է նշել, որ հունական Ուղղափառ Եկեղեցու Տիեզերական Պատրիարքարանը գտնվում էր Կ.Պոլսի Ոսկեղջյուրի թաղամասի Ֆեների շրջանում, որը բնակեցված էր մեծ մասամբ հույներով: Նշենք նաև, որ Ֆեների հույներից մեծ թվով պե-

տական գործիչներ կոչվել են «ֆեներճի», քանի որ նրանք Օսմանյան կայսրության Արտաքին գործերի նախարարությունում վարել են քարգմանչի և այլ կարևոր պաշտոններ: Հրեական համայնքը համեմատած ոչ-մահմեդական մյուս համայնքների հետ, եղել է առավել կազմակերպվածը և ունեցել է գործունյա վարչություն:

1859թ. աշխարհիկ և հոգևոր տարրերի միջև սաաջ եկած մրցակցության հետևանքով, ծագում են մի շարք ներհամայնքային տարածայնություններ՝ համայնքը բաժանվում է 2 խմբավորումների: Ի վերջո Բարձրագույն Դռան որոշմամբ համայնքի ղեկավարները, գումարելով ընդհանուր ժողով, ընդունում են «Բարքիության կանոնադրությունը», որը սուլթանական հրամանագրով վավերացվում է 1865 թ. մարտի 20-ին:

«Դյուստուրի» մեջ ընդգրկված կանոնադրության հեղինակները ամեն կերպ ձգտել են որոշ չափով աշխարհականացնել իրենց համայնքի կառավարումը, որը մինչ այդ տևապես գտնվել էր կրոնավորների վերահսկողության տակ: Միևնույն ժամանակ նրանք նպատակ ունեին մշտական կապ հաստատել կայսրության զանազան կենտրոններում (Սալոնիկ, Էդիրնե, Պլովդիվ, Իզմիր, Բուրսա, Երուսաղեմ) գտնվող միաբանությունների հետ և ստեղծել մեկ ընդհանուր ղեկավարություն Կ.Պոլսի գլխավոր Բարքիի առաջնորդությամբ: Բարքիության կանոնադրությունը բաղկացած է 5 գլուխներից և 48 հոդվածներից:

Հայ համայնքի «կանոնադրության» ստեղծման պատմությունը կայանում էր հետևյալում:

1854թ. օգոստոսին Գր. Օտյանը, Մերվիչենը (Մերովբե Վիչենյանը), Գ.Պալյանը, Ն.Ռուսինյանը, ինը հոգևորականների մասնակցությամբ կազմում են հայ ազգի կանոնադրության նախագիծը և ներկայացնում Պատրիարքին՝ վավերացնելու համար: Կանոնադրության այս անդրանիկ նախագծի վավերացումը ձգձգվում է երկու տարի և ի վերջո ձախողվում պալատիայ ամիրանների և կղերականների կողմից: 1858թ. նոր կազմված հանձնաժողովը կանոնադրությունը վերամշակելուց հետո, այն ներկայացնում է Ազգային Ժողովի հաստատմանը: Տևական և համառ պայքարից հետո 1860թ. մայիսի 24-ին հայ առաջադիմական մտավորականներին հաջողվում է կանոնադրության նոր խմբագրությունը ներկայացնել ընդհանուր ժողովի քննարկմանը, որը հաստատվելուց հետո, Ն.Ռուսինյանի առաջարկությամբ կոչվում է «Ազգա-

յին Սահմանադրություն»։ Սակայն, որպեսզի «Ազգային Սահմանադրությունը» իրավական ուժ ստանար, պետք է հաստատվեր կառավարության կողմից։ Բարձրագույն Դուռը իր հերթին մոտ երեք տարի ձգձգելուց հետո, 1863թ. մարտի 17-ին հաստատում է խմբագրած օրինակը⁸։

«Դյուստուր»-ի մեջ հրատարակված «Ազգային Սահմանադրության» թուրքերեն թարգմանությունը կատարված է այս վերջին հայերեն խմբագրությունից։ Անհրաժեշտ է նշել, որ կանոնադրության թուրքերեն և հայերեն խմբագրության մեջ կան որոշ տարբերակումներ. հայերեն բնագրի մեջ «Ազգային Սահմանադրություն Հայոց» խորագիրը թուրքերենում դարձել է «Հայ Ազգի Կանոնադրություն» (Nizamname-i Millet-i Ermenian)։ Բնականաբար տիրող միապետական կարգերում խոսք անգամ չէր կարող լինել «Սահմանադրություն» բառի գործածության մասին։ «Դյուստուր»-ի հրատարակությունից այս կանոնադրությունը թարգմանել ենք հայերենի, որը անտիպ վիճակում պահվում է մեր արխիվում։ Մեր թարգմանության տողատակերին նշել ենք այն բոլոր տարբերությունները, որոնք կան հայերեն և թուրքերեն խմբագրությունների մեջ։ Հարկ է նշել, որ 1916թ. հուլիսի 28-ի հրամանագրով թուրքական կառավարությունը դադարեցրեց «Ազգային Սահմանադրության» գործածությունը⁹։ Այն կրկին գործածության մեջ մտավ մայն 1918թ. երիտթուրքերի կառավարության անկումից հետո և որոշ վավախություններով գործադրվում է Թուրքիայում մինչև այսօր¹⁰։

«Ազգային Սահմանադրության» 1860թ. խմբագրությունը ունի մի շարք թարգմանություններ¹¹։

19-րդ դարում զգալի փոփոխություններ տեղի ունեցան հատկապես հույն և հայ համայնքների ներսում։ Հռոմեական կաթոլիկ եկեղեցու ծավալած քարոզչության ազդեցության ներքո, հայերի որոշ մասը սկսեց հարել կաթոլիկության։ Այս պառակտումը դժգոհություն առաջացրեց հայ լուսավորչականների շրջանում և, հակառակ ձեռնարկված քայլերին, 1831թ. կաթոլիկ հայերը Բարձրագույն Դռան կարգադրությամբ կազմեցին առանձին հայ կաթոլիկական համայնքը և «Դյուստուր»-ի մեջ ընդգրկված է 1839 թ. ապրիլի 3-ին, սուլթան Մահմուդ 2-րդի կողմից «Հայ Կաթոլիկ Պատրիարք Հասուն Էֆենդիին շնորհված սուլթանական հրովարտակը»¹²։

1847 թվականից սկսած Հայ Եկեղեցու պառակտումը խորացավ մաս հայ բողոքականների անջատումով, որոնք 1850թ. սուլթանական հրովարտակով հաստատվում են որպես առանձին համայնք:

Պառակտվում էին մաս հունական համայնքները: 1840թ. լատինները բաժանվեցին և հիմնեցին առանձին լատինական համայնք (Latin Rayasi), իսկ 1847թ. Ունիատների (Մելքիդների եկեղեցիների միացման կողմնակիցների) առաջնորդը Բարձրագույն Դռնից ստացավ պատրիարքի տիտղոս¹³:

Սլավոնական ժողովուրդները, մինչև քաղաքական անկախության հասնելը, դժգոհ էին և ամեն կերպ ձգտում էին ազատվել հունական եկեղեցու անմիջական ազդեցությունից: 19-րդ դարի 40–50-ական թթ. բուլղարական մի շարք քաղաքներում բուռն պայքար սկսվեց տեղի հույն եպիսկոպոսներին հեռացնելու համար և նրանց տեղը նշանակելու բուլղար հոգևորականներին: Նույնիսկ 1846թ. բուլղարական մտավորականության ներկայացուցիչները ինքնուրույն ազգային եկեղեցի ստեղծելու խնդրանքով դիմեցին Սանկտ Պետերբուրգ:

Բուլղարներին հաջողվեց առանձին Էկզարխություն (Ուղղափառ ինքնուրույն եկեղեցի) ստեղծել միայն 1870թ. փետրվարի 26-ին, երբ Բարձրագույն Դուռը ռուս դիվանագետների միջամտությամբ ստիպված եղավ հատուկ հրովարտակով ճանաչել բուլղարական եկեղեցու ինքնուրույնությունը¹⁴:

«Դյուստուր»-ի մեջ ընդգրկված են մաս տարբեր համայնքների կրոնական առաջնորդների պաշտոնավարությունը հաստատող սուլթանական բարձր բերաթներ:

Ստորև բերում ենք թուրքերեն բնագրից թարգմանված խոբագրերը:

1. «Հույն Պատրիարք Երմանոս Էֆենդիի պաշտոնավարությունը բովանդակող բարձր բերաթը»: Հաստատման տարեթիվն է 1331թ. Բեպի Ուլ-Էվլե (1912թ. փետրվարի 14)¹⁵:
2. «Հրեաների գլխավոր Բաբբի Խայիմ Նահում Էֆենդիի պաշտոնավարությունը բովանդակող բարձր բերաթը»: Հաստատման տարեթիվն է 1327թ. Ճումատի Ալ-Ահիլ 23 (1909թ. հունիս 13)¹⁶:

3. «Հայ Պատրիարք Արշարունի Հովհաննես Էֆենդիի պաշտոնավարությունը բովանդակող բարձր բերաթը»: Հաստատման տարեթիվն է 1329թ. Ջիլիիջջէ 28 (1911թ. դեկտեմբեր 20)¹⁷:
4. «Միրոֆ Էֆենդիին բուլղար կաթոլիկ Եպիսկոպոսության պաշտոնին նշանակման մասին բարձր բերաթը»: Հաստատման տարեթիվն է 1327թ. Ճումատի Ալ-Ահիր 9 (1909թ. հունիս 19)¹⁸:
5. «Մարոնիների Պատրիարք Իյաս Էֆենդիի պաշտոնավարությունը բովանդակող բարձր պերաթը»: Հաստատման տարեթիվն է 1333թ. Սաֆար 27 (1914թ. հունվար 17)¹⁹:

«Դյուստուր»-ի մեջ ընդգրկված է նաև ներքին ինքնավարություն ունեցող նահանգների կանոնադրությունները:

19-րդ դարում Օսմանյան կայսրության մեջ ստեղծվեցին մի քանի նահանգներ, որոնք կառավարվում էին վարչական և դատական յուրահատուկ օրենքներով: Այդ նահանգներն էին Կրետե կղզին, Սամոս կղզին, Լիբանանի և Աֆոնի լեռները, որոնց բնակչությունը գերազանցապես բաղկացած էր քրիստոնյաներից:

Սամոս կղզին կիսաանկախ իշխանություն (բեյություն) էր դարձել դեռևս 1831թ.՝ Սուլթան Մահմուդ 2-րդի շնորհած հրովարտակով, որը չի ընդգրկվել «Դյուստուր»-ի մեջ: «Դյուստուր»-ի մեջ բերված է 1878թ. մարտի 4-ին մեծ վեզիրի կողմից Սամոս կղզու դեկավարությանն ուղղված 5 բարեփոխված հռվածներով կանոնադրությունը, որն առընչվում է դատական, առողջապահական, հարկային գանձումների հարցերին, ինչպես նաև անվտանգության նկատառումներով դեպի կղզի զինվորական մի նոր ջոկատ առաքելու խնդրի հետ²⁰:

1860թ. Լիբանանի մահմեդական դրուզները կազմակերպեցին քիստոնյա մարոնիտների ջարդ: Նույնը տեղի ունեցավ նաև Դամասկոսում: Այդ կոտորածներից հետո մեծ պետությունների անմիջական միջնորդությամբ Լիբանանին տրվեց ներքին ինքնավարության որոշ արտոնություններ: 1861թ. հունիսի 9-ին շտապ կազմվեց առաջին վորձնական կանոնադրությունը, որը պիտի գործադրվեր երեք տարում՝ միջազգային հսկողությամբ²¹: Այնուհետև, երեք տարի անց ժամկետը լրանալու կապակցությամբ, 1864թ. սեպտեմբերի 17-ին սուլթան Աբդուլ Ազիզի կողմից Լեռնալիբանանին շնորհվեց 18 հռվածներից բաղկացած մի նոր խմբագրությամբ կանոնադրություն, հետևյալ խորագրով՝ «Այս է Լեռնային Լիբանանի բարեփոխած նոր կանոնադրությունը»:

«Կրետեի վիլայեթի կանոնադրությունը» խորագիրը կրող հրովարտակը տրված է 1867թ. հոկտեմբերի 1-ին սուլթան Աբդուլ Ազիզի կողմից: Կանոնադրության հոդվածները հիմնականում վերաբերվում էին Կրետե կղզու ընդհանուր ժողովին, ավագների խորհրդին, կազաներին և մութասարիֆություններին, խառը դատարանների և առևտրական դատարանների իրավունքներին, պարտավորություններին և նրանց ընտրության կարգին²²:

1908թ. Սահմանադրության վերականգնման վերաբերյալ սուլթան Աբդուլ Համիդի հռչակագիրը ընդգրկված է 1911թ. լույս տեսած «Դյուստուր»-ի առաջին հատորի սկզբում:

Այս Սահմանադրության վերականգնման պատմությունը հետևյալն է.

1908թ. հուլիսի 23-ին երիտթուրքերի գաղտնի կազմակերպությունը, ապստամբելով Սալոնիկում և Մակեդոնիայի այլ քաղաքներում, իշխանությունը վերցրեց իր ձեռքը: Սիւնույն ժամանակ պահանջ ներկայացվեց սուլթան Աբդուլ Համիդին, 1876թ. թուրքական առաջին Սահմանադրությունը վերականգնելու համար: Աբդուլ Համիդը ստիպված գիջեց և հուլիսի 24-ին հատուկ հռչակագիր հրապարակվեց Սահմանադրության վերականգնման մասին: Ստորև ներկայացնում ենք այդ հռչակագրի 1-8 հոդվածների թարգմանությունը՝ կատարված մեր կողմից, ուր մարդասիրական դրույթներով իրոք որ խոստացվում էր պաշտպանել անխտիր բոլոր հպատակների կյանքի, ունեցվածքի ու պատվի ապահովությունը:

1. «Յուրաքանչյուր հպատակ, ինչ ազգության և դավանանքի էլ պատկանելիս լինի, օժտված լինելով անձնական ազատությամբ, հավասար է օրենքի և հարկատվության առաջ:
2. Օրենքից դուրս ոչ մեկը չի կարող հարցաքննվել, բանտարկվել և կամ այլ կերպ պատժվել:
3. Արտակարգ հանգամանքների բերումով, այս կամ այն ձևով կամ անուճով եթե դատարաններ կամ հանձնաժողովներ կազմվեն, ապա, ըստ օրենքի արտոնություն ունեցող մեկը չի կարող դատարանից դուրս մի այլ վայրում հարցաքննության ենթարկվել:
4. Որևէ անձի բնակարանը հարձակման չի կարող ենթարկվել: Օրենքից դուրս որևէ անձի բնակարանը մտնել և խուզարկելը անթույլատրելի է:

5. Ոստիկանությունը կամ տարբեր անվան տակ այլ պաշտոնյաներ ոչ մի ձևով իրավուք չունեն օրենքի սահմաններից դուրս որևէ անձի նկատմամբ բռնություն գործադրելու:
6. Մեր հպատակները առևտրի և ուղևորության նկատառումներով իրավունք ունեն ցանկացած անձնավորությունների հետ հանդիպելու և հաղորդակցության մեջ մաներու:
7. Տպագրության գործը կառավարության կողմից չպետք է, որ քննության ենթարկվի: Անձնական նամակները և պարբերական մամուլը նամակատներում ստուգման ենթակա չեն: Տպագրության հետ առնչվող հարցերը լավելու են սովորական դատարաններում:
8. Ուսուցումը ազատ է» և այլն²³:

Հստակ նկատելի, որ այս և 1839 թվականից հրապարակված սուլթանական բոլոր բարձր հրովարտականերից յուրաքանչյուրը կրկնում է նախորդի միտքը ապահովել ազգային փոքրամասնությունների մարդկային իրավունքներն ու բարեկեցությունը: Սակայն, իրավիճակը մնում էր նույնը և այդ խոստումները նորից մնո՞ղմ էին թղթի վրա: Այդպես եղավ նաև Աբդուլ Համիդի այս հռչակագրի հետ: Հակառակ Սահմանադրության վերահաստատման և հրապարակված այլ հրամանագրերին, թուրք պաշտոնատար անձիք բոլորովին անտարբեր էին մնում այն կյանքում իրագործելու խնդրում: Այս կապակցությամբ շատ տեղին գնահատական է տվել ժամանակի իրավաբան-պատմաբան Ռոլեն Ժեկմենը, մատնանշելով, որ «Հաթթը Շերիֆը», «Հաթթը Հյումայունը» ինչպես նաև 1876 թ. Օսմանյան Սահմանադրության մեջ բերված բոլոր խոստումները փքուն ստեր են²⁴: Կյանքի, պատվի և ունեցվածքի անձեռնմխելիության վերաբերող վերոհիշյալ դրույթները ամբողջովին անտեսվեցին և բոլորովին չգործադրվեցին կյանքում: Ընդհակառակը արևմտահայության և մյուս ազգերի վիճակը առավել վատթարացավ, իսկ խանդավառությունը Սահմանադրության վերականգնման ուղղությամբ՝ տևեց շատ կարճ: Ադանայում և Կիլիկիայի մի շարք վայրերում տեղի ունեցած կոտորածները կրկին բացեցին ժողովրդի սրտում խորացած Աբդուլ Համիդի շրջանի արյունահեղության ծանր վերքերը:

1910թ. Սալոնիկում կայացած «Միություն և Առաջադիմություն» կուսակցության տեղական կոմիտեի գաղտնի նիստում Թալեաթը հայտարարեց հետևյալը. «Դուք գիտեք, որ սահմանադ-

րությամբ մահմեդականների և քրիստոնյաների հավասարություն է հաստատվել, բայց դուք բոլորդ միասին և ամեն մեկդ առանձին գիտեք և զգում եք նաև, որ դա անհրապարակապես զաղափար է, Շարիաթը, մեր անցյալի ամբողջ պատմությունը, հարյուր հազարավոր մահմեդականների զգացմունքները և նույնիսկ իրենց՝ քրիստոնյաների զգացումը, որոնք համառորեն դիմադրում են իրենց օսմանականացման ամեն մի փորձի դեմ, անհաղթահարելի պատմել են իսկական հավասարության համար...: Ուստի հավասարության մասին խոսք անգամ չի կարող լինել մինչև այն ժամանակ, քանի դեռ մենք հաջողությամբ չենք պսակել կայսրության սահմանականացման մեր նպատակը»²⁵:

Ավելի ուշ 1911թ. հոկտեմբերին կրկին Սալոմիկում տեղի ունեցած իթթիհատականների համագումարը կայացրեց հետևյալ որոշումը. «Վաղ թե ուշ պետք է իրագործվի Թուրքիայի բոլոր հպատակների օսմանականացումը, բայց մի բան պարզ է, որ դա երբեք չի կատարվի համոզելով, այլ պետք է իրականացվի զենքի ու ժով»²⁶:

Այս բոլորի տրամաբանական շարունակությունը եղավ այն, որ հայերը ենթարկվեցին ամենադաժան հալածանքների և ֆիզիկական ոչնչացման: Այնպես որ 1915–16թթ. զանգվածային տեղահանություններն ու կոտորածները Արևմտյան Հայաստանի քաղաքներում և գյուղերում, ինչպես նաև Փոքր Ասիայի տարածքում գտնվող հայաբնակ վայրերում, չէին առնչվում ռազմական միջոցառումների հետ, քանի որ հայության բնաջնջման հարցը նախօրոք մշակված և որոշված էր «Միություն և Առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի կողմից:

AVETIS PAPAZYAN

THE "REFORMS" OF THE TANZIMAT IN THE OTTOMAN LEGISLATION

In 1839 a major political reform movement began within the Ottoman Empire. This process of change has generally been labeled "Tanzimat", which in Arabic means „to reform or to order“.

One of the goals that the Tanzimat relays is a desire to abolish discrimination between varying religious groups. By abolishing discrimination, the life, property and honor of all Ottoman subjects would be protected and thus maintained. During this period, the Tanzimat reformers aspired to create a justification for the appointment of

taxes, a compulsory military conscription, a court of justice, a reformation of inheritance laws and speculations.

Although the Tanzimat strove to reform, in varying degrees, the strongest reformation that arose, due to the Tanzimat, did so by giving a certain restricted amount of religious rule to religious communities, similar to the way in which some Christian nations held the authority of self determination. For instance, Montanous Lebanon, Mount Afon, Crete, and the Samos Islands are only a few examples of where some internal self determined rules can be observed.

Unfortunately, the majority of adopted laws, made during the Tanzimat, which could have improved the conditions for Christians, remained unrealized. The laws appeared on paper, and were never enacted in life. In fact, conditions for the non-Muslim Ottoman citizen became worse.

In the years after the close of the Tanzimat, in order to solve the "national question", Young Turks decided to annihilate suspect nations. Therefore, between the years of 1915 and 1916, the Young Turks committed a policy of Genocide in order to resolve the "Armenian question".

ՅԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Düstur, Tertip-i evvel, cild 1-2, Istanbul, 1289. Cild 3, 1293. Cild 4, 1296. Այս և հետագայում նշված հատորները օսմաներին արաբատառ թուրքերենով են:
2. Düstur, Tertip-i evvel, cild 1, Istanbul, 1298, cild 2, 1299, cild 3, 1300.
3. Düstur, Tertip-i sani, cild 1, Istanbul, 1329.
4. Sh'u 1) Testa I., Recueil des traités de la Porte Ottomane avec les puissances etrangere depuis 1536, vol. I-VIII, Paris, 1865-1896. 2) Aristarchi bey, Legislation Ottomane, ou Recueil des Lois, reglements, ordonances traites, capitulations et autres documents officiels, de L'Empire Ottoman, Constantinople, 1873-1878, T. 1-5. Նույն մատենաշարի 6 և 7-րդ հատորները տես՝ Démétrius Nicolaidès, Legislation Ottomane, sixième partie, 1881, septieme partie, 1888. 3) Noradounghian G., Recueil d'actes internationaux de L'Empire Ottoman, T. I, 1897, T. 2, 1900, T. 3, 1902, T. 4, 1905. 4) Young G., Corps de droits Ottoman, Th. I-VII, Oxford, 1905-1906. Biliotti A., Ahmed Sedad, Legislation Ottoman, depuis Le Re-tablissement de la Constitution, 1912. 5) Дорев П., Документи за българската история, документи из турските държавни архиви (1564-1908), част I. София, 1942. 6) Fekete L., Einfuerung in die Osmanisch Tuerkische Diplomatie der Tuerkischen Botmassigkeit in Ungarn, Budapest, 1926.
5. Düstur, Tertip-i sani, cild 2, s. 92-118.
6. Düstur, Tertip-i sani, cild 3, 562-566.
7. Sh'u A. Убичини и П. де Куртейль, Современное состояние Оттоманской империи, С.Петербург, 1877, с.180.
8. Մանրամասն փս' Հայկ Ղազարյան, Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800-1870 թթ., Երևան, 1967, էջ 446:

9. Ջավեն Արքեպիսկոպոս, Պատրիարքական հուշերս, Վավերագրություններ և վկայություններ, Կահիրե, 1947, էջ 192: .
10. Լ.Գույումճյան, Հարցապնդում, հայ համայնքային անցուղարձեր: Ստամբուլ, 1950, էջ 9–10:
11. Այն ամբողջովին թարգմանված է ֆրանսերեն և հրապարակված է 1861–62 թթ. Փարիզում: “Revue de L'Orient de L'Algérie et de Colonies” ամսագրում; Նույնի 1863 թվականի թարգմանությունը կրճատումներով լույս է ընծայել Յունգը (George Young, Corps de droit Ottoman, Oxford, 1905, P. 79–92). 1863 թվականի խմբագրությունը ունի մաս անգլերեն թարգմանություններ: (Shu F.B.Lynch, Armenia, vol. 2, London, 1901. Ֆ.Պ.Լինչ, Հայաստան, Հատ. 2, Թուրքական մահանգ, Թիֆլիս, 1910, էջ 581–609 (շուսերեն): Կանոնադրության հայերեն բնագրերի հրատարակությունները տես «Մասիս», 1857, մարտ 28, թիվ 270, Կ.Պոլիս: Ատոմ, Ազգային սահմանադրություն, Կ.Պոլիս, 1914 և այլն:
12. Düstur, Tertip-i evvel, cild 4, İstanbul, 1269, s. 793–796.
13. А.Убичини и П. де—Куртейль, Указ. соч., с. 166.
14. История Болгарии, М., 1954, т.1, стр. 250.
15. Düstur, Tertip-i sani, cild 5, s. 63–68.
16. Düstur, Tertip-i sani, cild 2, s. 351–355.
17. Ամբողջական թարգմանությունը տես՝ Ավետիս Փափազյան, Թուրքական վավերագրերը Հայաստանի և հայերի մասին, Երևան, 1999, էջ 199:
18. Düstur, Tertip-i sani, cild 1, s. 324.
19. Düstur, Tertip-i sani, cild 7, s. 207–210.
20. Düstur, Tertip-i sani, cild 4, s. 303–304.
21. Düstur, Tertip-i sani, cild 4, s. 695–701.
22. Düstur, Tertip-i sani, cild 1, s. 652–655.
23. Düstur, Tertip-i sani, cild 1, s. 11–14.
24. Ролен—Жекмен М.Г., Армения, Армяне и Трактаты, М., 1897, с. 24.
25. Геноцид армян в Османской империи. Сборник документов и материалов, составители М.Г.Нерсисян, Р.Г.Саакян, Ереван, 1982, с. 202.
26. Lepsius J., Der Todesgang des Armenischen Volkes, Potsdam, 1930, s. 222.